



Հուլիս-օգոստոս ամիսների լրափուլ



ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆՂԱՆԱՔԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

Երևանի կենդանաբանական այգու այս տարվա նոր բնակիչները




Երևանի կենդանաբանական այգին այս տարի 106 նոր բնակիչ ունի, որից 17-ը կաթնասուններ են, 89-ը թռչուններ: Առաջին ծինը գրանցվել է 07.01.12-ին, որը Անդրկովկասյան գորշ արջուկն է, իսկ վերջին ծինը 28.06.12-ի Եվրոպական եղնիկն է: Բոլոր ձագերն էլ հարմարված են մեր բնակլիմայական պայմաններին: Ուրախությամբ կշենք, որ նախորդ տարվա համեմատ մեծ աճ է գրանցվել թռչունների բաժնում, իսկ կաթնասունների մոտ ոչ, քանի որ Երևանի կենդանաբանական այգին ունի կենդանիներին պահելու տեղի մեծ խնդիրներ՝ այդ իսկ պատճառով շնագրիների ու խոշոր կատվագրիների մոտ զուգավորում այս տարի չէր պլանավորվել: Կշենք, որ նոյեմբերին սպասում ենք ուղտայծի ձագուկի լույս աշխարհ գալուն:

Բացօթյա կինոցուցադրությունները՝ Երևանի կենդանաբանական այգում



Երևանի կենդանաբանական այգում արդեն երկրորդ տարին է ինչ կազմակերպվում են բացօթյա կինոցուցադրություններ: Կենդանաբանական այգում ցուցադրվող բնապահպանական ֆիլմերը՝ «Արևորդի» միջազգային բնապահպանական փառատոնի ֆիլմերն են, որոնք ուսուցողական նպատակ ունեն և ապահովվում են այցելուների ոչ միայն լավ ժամանցը, այլև կապը կենդանիների և բնության հետ:



Այս տարի բացօթյա կինոդիտումների մեկնարկը հունիսի 30-ին էր, «Շնակապիկ Ավազակներ. Կապկատազնապ Հարավային Աֆրիկայում» ֆիլմն էր, որին հաջորդեց, «Բաման և կորած գորիլաները», «Կակաչի խոստումը», «Անդերի վայրի դեմքերը» բնապահպանական ֆիլմերը: Բոլոր ֆիլմերի հայերեն թարգմանությունները բավականին հաջող են կատարված, իսկ ֆիլմերը մասնակցել են 2011-ին Արևորդի 3-րդ միջազգային բնապահպանական փառատոնին:

«Արևորդի» միջազգային բնապահպանական փառատոնի ծրագրերի ղեկավար Բարբարա Չիբերթի կարծիքով բնապահպանական ու սոցիալական խնդիրները սերտ կապակցված են միմյանց հետ ու Հայաստանում կան շատ սոցիալական ու առողջապահական խնդիրներ, որոնց հետևում բնապահպանական խնդիրներ են: Ծրագրի ղեկավարը կշում է, որ հայ հանդիսատեսը առանձնահատուկ է ու Հայաստանում ավելի շատ սիրում են գեղարվեստական ֆիլմեր, քան բնապահպանական. «Եթե անգամ 2 կամ 3 մարդ է գալիս, որոնք կյանքում նման ֆիլմեր չէին էլ դիտել, տեսնում են ֆիլմերն ու հավանում, ապա սա իրոք մեծ առաջընթաց է, սակայն երկար ժամանակ մեզանից կպահանջվի մինչև մարդիկ կսովորեն բնապահպանական ֆիլմեր դիտել»:

Ավելացնենք, որ առաջիկա շաբաթ օրերին ժամը 20:30-ին կցուցադրվեն հետևյալ բնապահպանական ֆիլմերը:

Հուլիսի 28-ին կցուցադրվի «Վայրի Հունգարիա. Ջրային հրաշքների աշխարհ» ֆիլմը, օգոստոսի 4-ին՝ «Արծիվների վերադարձը», օգոստոսի 11-ին՝ «Ֆինլանդիա», օգոստոսի 18-ին՝ «Ռադիոակտիվ գայլեր» բնապահպանական ֆիլմերը:

Երևանի կենդանաբանական այգին ամռան այս շրջ եղանակին մի հիանալի ու գեղեցիկ վայր է ընտանիքով այցելելու ու լավ ժամանց անցկացնելու համար:

Երևանի կենդանաբանական այգում կենդանիների ցուցադրական կերակրումները կներկայացվեն նորովի



Մեկ տարի է, ինչ Երևանի կենդանաբանական այգում իրականացվում են կենդանիների ցուցադրական կերակրումներ: Նմանատիպ ցուցադրություններ իրականացվում են այլ երկրների կենդանաբանական այգիներում ևս:

Արդեն կազմվել է կենդանիների կերակրման նոր ժամանակացույցը: Այսուհետ Երևանի կենդանաբանական այգում ցուցադրական կերակրման հետ համատեղ մասնագետները այգու այցելուներին կներկայացնեն տվյալ կենդանու մասին հետաքրքիր ու օգտակար տեղեկություն:

Նմանատիպ ցուցադրությունների հիմնական նպատակն է առաջին հերթին ստեղծել կենդանու բնական զբաղվածությունն անազատ պայմաններում: «Մենք փորձում ենք ապահովել կենդանիների բնական շարժը: Եթե նախկինում կենդանաբանական այգու այցելուները կենդանիների վանդակների մոտից անցնում էին արագ, որտեղ կենդանին կամ քնած էր լինում կամ պառկած, այսօր նույն այցելուների համար հնարավորություններ են ստեղծվել ոչ միայն դիտել կենդանիներին, այլև տեսնել կենդանիների ցուցադրական կերակրումները» իր խոսքում կշում է Երևանի կենդանաբանական այգու փոխտնօրեն Մանուկ Մանուկյանը:

Բացի կենդանիների ցուցադրական կերակրումներից, Երևանի կենդանաբանական այգու այցելուները հնարավորություն ունեն մասնագետից տեղեկանալ իրենց դուր եկած կենդանիների մասին, անգամ հարցեր ուղղել մասնագետին:



Նոր մարդ ու կենդանի. յուրօրինակ շփում



Երևանի կենդանաբանական այգում մարդ-կենդանի փոխհարաբերությունները կարծես նոր գույն ստացած լինեն: Շատ բաներ փոխվել են, իսկ ամենակարևորը փոխվել է մարդու վերաբերմունքը կենդանու նկատմամբ: Հիմա արդեն ճաղերից այն կողմ գտնվող կենդանին մանուկի կամ ծերի զվարճանքի առարկան չէ: Այժմ կենդանուն լսում են, խոսում նրա հետ, անգամ կիսվում մտքերով ու տրամադրությամբ: Բացի այս, այգու այցելուներն անմասն չի մնում նաև կենդանու խնամքի աշխատանքներից, իսկ սեփական ձեռքերով կենդանուն կերակրելն այգում դարձել է բարի ավանդույթ: Այս ամենը վերափոխվել է, ու փոխվել է մի ծրագրի շնորհիվ, որ կոչվում է հնամակալություն:

Սիմվոլիկ գումարով ցանկացած այցելու կարող է դառնալ այգու կենդանիներից մեկի խնամակալը մեկ տարի ժամկետով, այս կերպ մի փոքրիկ ներդրում ունենալով Երևանի կենդանաբանական այգու վերափոխման և կենդանիների բարեկեցության գործում: Առաջին խնամակալությունը դեռ անցած տարի էր՝ մայիս 26-ին, իսկ արդեն այսօր այգին ունի 40-ից ավել լավ ու նոր բարեկամներ: Հունիս-հուլիս ամիսները հագեցած էին նոր խնամակալություններով. Երկապատավոր ուղտը, Շոտլանդական պոնիները, Կենգուրու բեննետան, Պալիան բաբուինը, Գետաձին, Բենգալյան վագրը, Աֆրիկյան առյուծն այսուհետ ունեն նոր խնամակալներ: Օգոստոս ամսին նախանշված են նոր խնամակալություններ, նոր մարդ ու կենդանի հարաբերությունների հաստատում:

Եթե ցանկանում եք դառնալ Երևանի կենդանաբանական այգու բարեկամ ու կենդանիների ընկերը կարող եք գրել մեզ animaladoption@yerevanzoo.am էլ.հասցեով, իսկ մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել www.yerevanzoo.am կայքում:

